

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ապրիլի 2009 թվականի N 550-Ն

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ, ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ԴՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 6.2-րդ մասի, «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի վեցերորդ պարբերության, «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի երրորդ պարբերության, «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի երրորդ պարբերության, «Հայաստանի փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

1. Մահմանել ոստիկանության, զինված ուժերի, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, փրկարարական ծառայության, դատախազության պաշտոնների համապատասխանության ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Քրեակատարողական ծառայության պաշտոններին զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության, դատախազության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության պաշտոնների համապատասխանությունը և հարկադիր կատարման ծառայության պաշտոններին զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության, դատախազության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պաշտոնների համապատասխանությունը սահմանելու մասին» N 1199-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Տ. Մարգարյան

2009 թ. մայիսի 26
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
ապրիլի 30-ի N 550-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ, ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՍԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ԴՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՄԻԱՆՈՒԹՅԱՆ

NN ը/կ	ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության պաշտոններ	ՀՀ պաշտպանության նախարարության պետական ծառայողների պաշտոններ	ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության պաշտոններ	Քրեակատարողական ծառայության պաշտոններ	Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության պաշտոններ	Փրկարարական ծառայության պաշտոններ	Դատախազության պաշտոններ
1	2	3	4	5	6	7	8
1.	Ոստիկանության պետ, ոստիկանության պետի առաջին տեղակալ, ոստիկանության պետի տեղակալ	զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գլխավոր շտաբի պետի տեղակալներ	ազգային անվտանգության ծառայության տնօրեն, ազգային անվտանգության ծառայության տնօրենի 1-ին տեղակալ, ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ	-	-	-	գլխավոր դատախազի տեղակալ
2.	Գլխավոր վարչության պետ, այդ թվում՝ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետ	գլխավոր վարչության պետ և նրան հավասարեցված պաշտոններ, դիվիզիայի հրամանատար	գլխավոր վարչության պետ և նրան հավասարեցված պաշտոններ	քրեակատարողական վարչության պետ, քրեակատարողական վարչության պետի 1-ին տեղակալ	դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարող	Հայաստանի փրկարար ծառայության ղեկավար	Երևան քաղաքի դատախազ, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետեր
3.	Գլխավոր վարչության պետի տեղակալ, վարչության պետ և նրանց հավասարեցված պաշտոններ	վարչության պետ և նրան հավասարեցված պաշտոններ, բրիգադի հրամանատար	վարչության պետ և նրան հավասարեցված պաշտոններ	քրեակատարողական վարչության պետի տեղակալ	դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ	Հայաստանի փրկարար ծառայության ղեկավարի տեղակալ	ՀՀ մարզերի և Երևան քաղաքի համայնքի դատախազ
4.	Վարչության պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ	վարչության պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ, գնդի հրամանատար	վարչության պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ	քրեակատարողական հիմնարկի պետ, քրեակատարողական վարչության բաժնի պետ	կենտրոնական մարմնի պետ	կենտրոնական ապարատի վարչության պետ	ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների տեղակալներ
5.	Բաժնի պետ և նրան հավասարեցված պաշտոններ	բաժնի պետ և նրան հավասարեցված պաշտոններ, առանձին գումարտակի կամ առանձին դիվիզիոնի հրամանատար	բաժնի պետ և նրան հավասարեցված պաշտոններ	քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ, քրեակատարողական վարչության բաժնի պետ	մարզային բաժնի պետ, Երևանի քաղաքային բաժնի պետ	կենտրոնական ապարատի առանձին բաժնի պետ, կենտրոնական ապարատի վարչության պետի տեղակալ	ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներ
6.	-	-	վարչության պետ և նրան հավասարեցված պաշտոններ (ավագ խումբ)	-	-	կենտրոնական ապարատի վարչության բաժնի պետ, տարածքային՝ Երևան քաղաքի, վարչության պետ	ՀՀ զինվորական դատախազի տեղակալ, Երևան քաղաքի դատախազի տեղակալ, կայագործի զինվորական դատախազ
7.	-	-	վարչության պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ (ավագ խումբ)	-	-	տարածքային՝ Երևան քաղաքի, վարչության	Երևան քաղաքի համայնքի դատախազի տեղակալ, ՀՀ գլխավոր

						պետի տեղակալ	դատախազության վարչության և բաժնի ավագ դատախազ, ՀՀ գլխավոր դատախազության բաժնի պետ
8.	-	-	բաժնի պետ և նրան հավասարեցված պաշտոններ (ավագ խումբ)	-	-	հատուկ փրկարարական ջոկատի հրամանատար, հատուկ հրշեջ ջոկատի հրամանատար	ՀՀ զինվորական դատախազության բաժնի պետ, ՀՀ գլխավոր դատախազության վարչության բաժնի պետ
9.	Բաժնի պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ	բաժնի պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ	բաժնի պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ	քրեակատարողական վարչության գլխավոր մասնագետ, քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահ, քրեակատարողական հիմնարկի բաժնի պետ	բաժնի պետի տեղակալ	բաժնի պետ	-
10.	Բաժանմունքի պետ և նրան հավասարեցված պաշտոններ	բաժանմունքի պետ և նրան հավասարեցված պաշտոններ	բաժանմունքի պետ և նրան հավասարեցված պաշտոններ	քրեակատարողական հիմնարկի բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի բաժանմունքի պետ, քրեակատարողական հիմնարկի տեղամասի պետ	բաժանմունքի պետ	հատուկ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, հատուկ հրշեջ ջոկատի հրամանատարի տեղակալ, հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ	ՀՀ գլխավոր դատախազության բաժնի պետի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազության բաժնի պետի տեղակալ
11.	Բաժանմունքի պետի տեղակալ, հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, հատկապես կարևոր գործերով ավագ օպերլիազոր և նրանց հավասարեցված պաշտոններ	բաժանմունքի պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ	բաժանմունքի պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ	քրեակատարողական հիմնարկի խմբի ղեկավար	գլխավոր խորհրդատու	լաբորատորիայի պետ	ՀՀ զինվորական դատախազության դատախազ
12.	Ավագ տեսուչ, ավագ քննիչ, ավագ օպերլիազոր և նրանց հավասարեցված պաշտոններ	խմբի պետ, մասի պետ, ավագ սպա և նրան հավասարեցված պաշտոններ	ավագ օպերլիազոր և նրան հավասարեցված պաշտոններ	քրեակատարողական հիմնարկի գլխավոր մասնագետ	առաջատար խորհրդատու ավագ հարկադիր կատարող	խմբի պետ, ջոկի հրամանատար	Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ, մարզի դատախազության ավագ դատախազ, կայագործի զինվորական դատախազության ավագ դատախազ, Երևան քաղաքի

							համայնքի դատախազության ավագ դատախազ
13.	Տեսուչ, քննիչ, օպերիվագոր և նրանց հավասարեցված պաշտոններ	սպա և նրան հավասարեցված պաշտոններ	օպերիվագոր և նրան հավասարեցված պաշտոններ	քրեակատարողական վարչության առաջատար մասնագետ	առաջին կարգի խորհրդատու, հարկադիր կատարող	-	Երևան քաղաքի դատախազության դատախազ, մարզի դատախազության դատախազ, կայագործի գինվորական դատախազության դատախազ, Երևան քաղաքի համայնքի դատախազության դատախազ
14.	-	-	կրտսեր օպերիվագոր և նրան հավասարեցված պաշտոններ	քրեակատարողական վարչության առաջին կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի առաջատար մասնագետ, քրեակատարողական հիմնարկի առաջին կարգի մասնագետ	տեսուչ	ավագ փրկարար	-
15.	Կրտսեր տեսուչ, ավագ ռստիկան, ռստիկան և նրան հավասարեցված պաշտոններ	ենթասպաներով համալրվող պաշտոններ	ենթասպաներով համալրվող պաշտոններ	քրեակատարողական վարչության երկրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական վարչության երրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի երկրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի երրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի կրտսեր մասնագետ	-	փրկարար	-

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Մարգարյան